ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

«20» 07 2023 թ. N 06/241085-23

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
նախագահ Շ.Դոյդոյանին

ք.Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
էլ.հասցե՝ foi@foi.am,

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր՝ 14.07.2023թ., թիվ 351-23 հարցմանը՝ տեղեկացնում եմ, հարցմամբ նշված քրեական վարույթով հետագա նախաքննությունը հանձնարարվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնին:

Ինչ վերաբերում է հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքների վերացման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելուն, ապա հայտնում եմ, որ քրեական վարույթով ներկայումս ձեռնարկվում են միջոցներ հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները պարզելու ուղղությամբ և անհրաժեշտության դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով սահմանված կարգով կներկայացվի այդ հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին միջնորդագիր:

Հարգանքով՝
Պետ, արդարադատության
առաջին դասի խորհրդական Կ.Շառոյան